

Վանաձորի Ա.
Խլղաթյանի
անվան N 18 միջն.
դպրոցի

<< ԷԿՈ >> խմբակի
բնապահպանակա
ն ծրագիր՝

‘ՊԼԱՍՏԻԿԸ ԱՂԲ ՉԷ՝

կազմեց

Գայանե

Վարդույան



<< Երբ կկտրվի վերջին ծառը, երբ կթունավորվի վերջին գետը,

**երբ կսպանվի վերջին թռչունը ,այդժամ դուք կհասկանաք,որ
փողը հնարավոր չէ ուտել... >>**

**Բնությունը մարդուն տվել է երկու զենք՝ ինտելեկտուալ և բարոյական : Դրանք կարելի է
օգտագործել ի օգուտ կամ ի վնաս մարդկությանը: Մարդը, որը զուրկ է բարոյական արժեքներից, չի
կարող ճԻՇՏ օգտագործել այս ուժերը :Եթե մարդը սպառողական հոգեբանությամբ է մոտենում
բնությանը, այն պատժելու է մարդուն, բայց եթե բնությունը դիտում է որպես իր մասնիկն ու
միջավայրը, որտեղ ապրում է ինքն ու պետք է ապրեն նոր սերունդները, ապա բնությունը կտա
նրան ամեն ինչ, ինչը նրան պակասում է :**

**Վանաձորի Ա.Խլղաթյանի անվան հմ. 18 միջն. դպրոցում 2018 թ. սեպտեմբեր ամսից գործում է
'ԷԿՈ'բնապահպանական խմբակը, որի սահմաններում իրականացվում են մի շարք
բնապահպանական միջոցառումներ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են դաս-սեմինարներ,
արշավներ, ծառատունկ, միջոցառումներ, այցելություններ բնապահպանական օբյեկտներ,
մաքրապատման աշխատանքներ, որոնք ներկայացվում են ստորև սահիկաշարում:**

1 Ծրագրի նկարագիրը

ԷԿՈ խմբակի միջոցով իրականացվող բնապահպանական ծրագրերից մեկն էլ

<< Պլաստիկը աղբ չէ >> շարունակական ծրագիր է :

Աշակերտներին թափոնների տեսակավորում սովորեցնելը օր օրի ավելի հրատապ ու անհրաժեշտ է դառնում: Փորձը ցույց է տալիս, որ երեխաների ճկուն ուղեղն այսպիսի հարցերն ավելի հեշտ է ընկալում, ինչի շնորհիվ նրանք թափոնների տեսակավորման դասապաններ են դառնում իրենց ընտանիքներում՝ դա դարձնելով կենսակերպ:

Ծրագիրը նպաստում է բնապահպանական գիտելիքներով, երկրի պահպանությամբ մտահոգված նոր մտածելակերպով մարդու կայացմանը: Երկիրը պահպանելու խնդիրը պետք է լինի ապրելակերպ, մտածելակերպ, ապահովելով մի շարք բնապահպանական հիմնախնդիրներ: Ծրագիրը իրականացվում է դպրոցի ավագ և միջին դասարանների աշակերտների մասնակցությամբ :

Մեր գործընկերներն են՝ Վանաձորի համայնքապետարանը, CEEN-ը, Կանաչ արահետներ ԶԿ-ն և Կովկասի բնապահպանական ցանց ԶԿ-ն, ATP Eco Leaders /Էյ Թի Փի ակտիվիստներ (Յրանտ Դինքի հիմնադրամ) , 'Ջայկուհի Վարագդատ' ՍՊԸ-ն

2 Ծրագրի նպատակն ու

խնդիրները

- աշակերտներին ներկայացնել պլաստիկ թափոնների վնասակարությունը՝

հոլովակների, խաղերի, նվերների միջոցով:

- աշակերտների շրջանում ձևավորել թափոնների տեսակավորման հմտություններ,

նպաստել աշակերտների՝ շրջակա միջավայրի հանդեպ հոգածության ձևավորմանը, օգնել աշակերտների՝ իրենց որպես թիմի անդամ գիտակցության ձևավորմանը (ամրապնդմանը) :

- նապաստել աշակերտների ինքնադրսևորման և ինքնարտահայտման հմտությունների ձևավորմանը:

3 Ծրագրի ակնկալվող արդյունքը

- սովորողները կիմանան, թե ինչպես և ինչու է մարդը փոխակերպել շրջակա աշխարհը, տարրական գիտելիքներ կստանան մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցության ու իր կյանքում բնության դերի մասին
- հոգատար վերաբերմունք կդրսևորի բնության հանդեպ
- կարողանա օրինակներով հիմնավորել մարդու կախվածությունը շրջակա միջավայրից
- հասկանա շրջակա միջավայրի աղտոտվածության (նաև թափոնների) հասցրած վնասը Էկոհամակարգերին
- հասկանա պլաստիկ թափոնների՝ շրջակա միջավայրին հասցված վնասը
- մեկնաբանի, թե ինչու է անհրաժեշտ տեսակավորել թափոնները
- կարողանա մեկնաբանել սեփական և ուրիշների արարքների հնարավոր հետևանքները
- մեկնաբանի, թե ինչպես է մարդու գործունեությունն ազդում բնության վրա,

4 Ծրագրի իրականացման պլանը

Մասնակիցները՝ միջին և ավագ դասարանների աշակերտները

Ծրագրի ժամկետը՝ սկիզբը 2021 թ մարտ . /շարունակական է /

Ծրագրի բյուջեն՝ 300 000 ՀՀ դրամ

Ծրագրի հովանավոր՝ Վանաձորի համայնքապետարան և Զայկուհի և Վարազդատ՝ ՍՊԸ

Ծրագրի կարգախոսը՝ <<Կյանքն առանց պլաստիկի >>

Տարբեր խաղերի, տեղեկատվական հոլովակների և քննարկումների միջոցով կներկայացվի պլաստիկ թափոնների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա

Ծրագրի կատարման համար նախատեսվում են հետևյալ ուսումնական գործունեությունների տեսակները

1 Դասընթացի նյութի բացատրում, լուսաբանում ծրագրի ղեկավարի, ինչպես նաև աշակերտների կողմից հարցադրումների միջոցով:

2 Տեղեկատվական -ուսումնական հոլովակների ցուցադրում, որտեղ սովորողներին ցույց կտրվեն պլաստիկ օգտագործման արդյունքնում առաջացած խնդիրները, դրանց նվազեցնելու ուղիները :

3 Գործնական միջոցառումների անցկացում` ինտերակտիվ ուսուցողական խաղերի տեսքով:Սովորողները գործնական առաջադրանքներով կսովորեն` ինչպես տեսակավորեն աղբը :

4 Թեմային առնչվող բացատրական պաստառների տեղադրում դպրոցների

նախատեսված հատվածներում:

5 Տեսակավորման աղբարկղերի տեղադրում դպրոցներում

6 Լավագույնս դրսևորած երեխաների համար կկազմակերպվի ուսուցողական այց դեպի պլաստիկ վերամշակման գործարան:



Պլաստիկի առանձնացում

Խմբային աշխատանքի համար երեխաները բաժանվում են 6-5 հոգանոց խմբերի: Դպրոցի կոնկրետ հատվածում՝ դրսում կամ ներսում, պահվում են պլաստիկ աղբի տեսակներ (շշեր, պլաստիկ ամաններ, տոպրակներ և այլն), որոնք խմբերը պետք է գտնեն 20 րոպեի ընթացքում:

Երեխաներին տրվում է այն պարագաների ցուցակը, որոնք պետք է գտնել: Այն թիմը, որն ավելի շատ պարագաներ է գտնում ցուցակից, ճանաչվում է հաղթող: Խաղի նպատակն է սովորեցնել երեխաներին, որ պետք է ուշադիր լինել շրջակա միջավայրի նկատմամբ, կողքին զգուշացնել աղբը չնետել, որևէ աղբի այտնաբերելու դեպքում վերցնել և նետել աղբամանի մեջ:

ՊԼաստիկին երկրորդ կյանք

Ձևավորել խմբեր՝ 5-6 հոգուց բաղկացած. առաջարկել գրել պլաստիկին նոր կյանք տալու հնարավորինս շատ ձևեր ,որոնք կօգտագործվեն առօրյա կյանքում : Հատկացվում է 10 րոպե ժամանակ : Այն թիմը, որն ավելի շատ մեթոդներ է գրում ցուցակից, ճանաչվում է հաղթող:Խաղի նպատակն է սովորեցնել երեխաներին հնարավորինս լինել հնարամիտ և պլաստիկը աղբի չվերածել :

Բաժանիր և նետիր ճիշտ աղբամանը

Երեխաները բաժանվում են 3-4 խմբերի: Յուրաքանչյուր խմբի դիմաց կա ճանապարհ, որի վերջնակետին դրված են երեք տեսակի աղբարկղեր՝ նախատեսված պլաստիկի, ապակու և թղթի համար: «Սկսել» ազդանշանից հետո

թիմի յուրաքանչյուր անդամին տրվում է որևէ տեսակի մաքուր աղբ, նա պետք է վազելով անցնի ճանապարհն ու աղբը նետի ճիշտ աղբարկղի մեջ: Նույնը կրկնվում է խմբերի բոլոր անդամների համար: Հաղթում է այն թիմը, որի բոլոր անդամներն ամենաարագն են անցնում ճանապարհը, աղբը նետում աղբամանի մեջ և հետ վազում ու հասնում վերջնակետին: Խաղի նպատակն է՝ երեխաներին սովորեցնել տարանջատել աղբի ու աղբամանների տեսակները՝ այդպիսով կրթելով նրանց ճիշտ տեսակավորել աղբը: Այդ պատճառով խաղի վերջում յուրաքանչյուր աղբամանի

միջից կառանձնացվեն այն աղբի տեսակները, որոնք այլ աղբամանի մեջ պետք է ետվեին, և երեխաներին կբացատրվի, թե ինչու է տվյալ աղբը նախատեսված ոչ թե տվյալ, այլ մյուս երկու աղբամաններից մեկի համար:

Հաղթող խմբերի երեխաները կպարգևատրվեն բազմակի օգտագործման կտորե պայուսակներով և նոթատետրով (նոթատետրում կներկայացվի 10 փաստ պլաստիկի մասին), իսկ բոլոր մասնակիցները միայն նոթատետրերով, որոնք աշակերտները կօգտագործեն իրենց առօրյայում, և որոնք ամեն օր նրանց կհիշեցնեն պլաստիկի վնասակարության մասին:

5 Ծրագրի շարունակականության ապահովում

Ծրագիրը շարունակականությունը ապահովելու համար նախատեսվում է համագործակցել այլ դպրոցների բնապահպանական խմբակներ հետ :
Նախատեսվում է նաև հաջորդ տարիներին շարունակ թեմատիկ առաջադրանքների միջոցով ապահովել թեմայի ակտուալությունը:
Համագործակցել պլաստիկի վերամշակումով զբաղվող ընկերությունների հետ : Պարբերաբար աշակերտների համար կազմակերպել դասընթացներ:

ՄոԼտք 'ԷԿՈ' խմբակ

2018 սեպտեմբեր



Ջրի համաշխարհային օր 'Ջուրը կյանք է' ՄԱՐՏ 22







ԱյցելուԹյ
ուն՝
Վեոլիա
ջուր՝
Վանաձոր
ի ջրի
մաքրման
կայան



Մաքրապատում և կանաչապատում դպրոցամերձ տարածքում



ԷԿՈ քաց դաս՝ Էկո կարագի ստացում



Այց` Էյ-թի-փի բնապահպանական կենտրոն





ԼՈՒՈՒ ԲԵՐԴ



Էդմոն Լեոնովիչի անվան ՍոճուԼտ դենդրոպազի



Կենդանիների պաշտպանության օրվան նվիրված դաս- միջոցառում



MIG TVR







**Վանաձորի թիվ 18 դպրոցի
<<ԷԿՈ խմբակ>>-ը /13.10.2019/
մասնակցեց՝ ՀՀ Լոռու
անտառտնտեսության
կազմակերպած
ճառատունկին:
Ճառատունկի նպատակն էր
վերականգնել
անտառտնտեսության
վերահսկողության տակ
գտնվող երբեմնի կանաչ
գոտիներն ու անտառային
ծածկույթը:**








Վառուցե՛ք կամուրջներ՝ նախագծի շրջանակում ավագները աշխատում են կրտսեր դասընկերների հետ






Էկո դաս 'Պլաստիկը աղբ չէ'




**Աղբ թափելն
ամոր է / Throwing
out garbage is a
shame
'Պլաստիկը աղբ
չէ'**







Վանաձորի բուսաբանական այգի ' Ջազվգյուն մերկասերմեր '







Մեր հյուրն էր
**#Աղբ_թափելն_ամո
թ_Է** ծրագրի
հիմնադիր **Hakob
Mikoyan_ը:**
Նա դարոց էր եկել,
անձամբ իր ձեռքով
բաժանելու
#Մաքրապատման
աշխատանքների
մասնակցած
աշակերտների
պատվոգրերը:

Technovation մրցույթ
Բնապահպանական,
#մաքրապատում
շարքից
«Անօդաչու թռչող
սարքի օգնությամբ
մարդուն
անհասանելի
վայրերից պլաստիկի
, աղբի հավաքման
գյուտ» -ը 11
դասարանի
‘Էկո’խմբակի ավագ
Seryan Yenoqyan ինն
Է:

«Բնապահպանական անօդաչու թռչող սարք» կամ
«ԷԿՈ, Առաքիչ դրոն»





ԿԱՆԱԶ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐՆ ԵՆ

Սեյրան Ենոզյան, 16 տ

Վանաձոր, Լոռի

Լոռու մարզից Սեյրան Ենոզյանը համար գլխավ խնդիր է պլաստիկի միջոցով մոլորակի աղտոտումը և նրա գաղափարն է ստեղծել մի անօդաչու թռչող սարք, որն ունի տեսախցիկ, GPS սարք, բռնակ, սենսորներ Այն կկատարի հետևյալ ֆունկցիաները՝

- 1.որոնում, գտնում, ճանաչում է պլաստիկը (աղբ)
- 2.GPS սարքի օգնությամբ տեղեկացնում է իր գտնվելու վայրը
- 3.Բռնակով բռնում, բարձրացնում և բերում է աղբը նախապես քարտեզի վրա նշված վայրում

Seyran Yenoqyan, 16

Vanadzor, Lori

For Seyran Yenoqyan from Vanadzor, Lori marz plastic pollution is the most important issue and his green idea focuses on the creation of a drone which has a camera and identifies plastic waste.

Հերթական հաղթանակած Էկոները



Միացանք 'Մեկ աշակերտ մեկ ծառ' նախագծին



‘ԷԿՈ’ խմբակի աշակերտները սիրով և նվիրվածությամբ են մասնակցում բոլոր բանապահպանական ծրագրերին ,և մեծ ոգևորությամբ էլ իրենց մասնակցությունը կունենան ‘Պլաստիկը աղբ չէ’ ծրագրին :

